ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 06.03.2014թ.

Ո Ր Ո Շ Ում

ԳԲԽ-07/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-07/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Յասոն» ՍՊԸ-ի 2014 թվականի փետրվարի 28-ի գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Յասոն» ՍՊԸ-ի կողմից 28.02.2014թ. գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-13/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգով 24.02.2014թ. պայմանագիր կնքելու մասին որոշումը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:

2. Կասեցնել ՀՀ գլխավոր դատախազության կողմից տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԳԴ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգով «Յասոն» ՍՊԸ-ի հետ 24.02.2014թ. պայմանագիր կնքելու մասին որոշումը, մինչև ԳԲԽ 07/14 բողոքը քննող հանձնաժողովի կողմից բողոքի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Անդամներ՝ Վարազդատ Մկրտչյան

Դավիթ Թամարյան